ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին» հրամանի[1] նախագծի վերաբերյալ

Հրամանի նախագծի հավելվածի՝

1. Վերնագրում օգտագործված է «Հանրակրթական պետական հաստատություն» եզրույթը: Մինչդեռ, հրամանի նախագիծը կանոնակարգում է հանրակրթական ուսումնական բոլոր հաստատությունների կառավարման խորհուրդների ու մանկավարժական կադրերի բարեվարքության կանոնները: Հրամանի նախագծի վերնագրում «պետական» բառը նույնպես բացակայում է:
   Առաջարկություն
- **Հրամանի նախագծի հավելվածի վերնագրից հանել «պետական» բառը:**

2. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բաժնի 1-ին կետում բացակայում է թե ո՞ր օրենքի և ո՞ր հաստատությունների մանկավարժական աշխատողների բարեվարք վարքագիծն է ապահովելու հաստատվելիք վարքագծի կանոնները:
   Առաջարկություն
- **Ընդհանուր դրույթներ բաժնի 1-ին կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետև՝ հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետև՝ խորհուրդ) անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները բխում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 1-ին մասի 26.6 կետի, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրություններով, հանրակրթական պետական չափորոշիչներով, ուսուցչին ներկայացվող մասնագիտական չափանիշներով սահմանված պահանջներից»:**

2.1 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բաժնի 2-րդ և 3-րդ կետերը չեն բնութագրում «Խորհրդի անդամի և մանկավարժական աշխատողների» բարեվարքությանը ներկայացվող դրույթները: Ընդհանուր դրույթներ բաժնում բացակայում են փաստաթղթի նպատակը, կարգավորման առարկան, օգտագործվող հիմնական հասկացությունների, եզրույթների մեկնաբանությունները, բարեվարքության (վարքագծի կանոնների) սկզբունքները:
   Առաջարկություն
- **«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բաժնի 2-րդ և 3-րդ կետերը հանել:**

---

[1] https://www.e-draft.am/projects/5299/about

- **Առանձին կետով սահմանել հաստատության և խորհրդի անդամների, մանկավարժական կադրերի վարքագծի կանոնների նպատակը: Մասնավորապես, որպես օրինակ, առաջարկվում է քննարկել հետևյալ նպատակը՝ « 2. հաստատության խորհրդի անդամների և մանկավարժական կադրերի բարեվարքության կանոնների սահմանման նպատակն է՝ 1) ապահովել խորհրդի անդամների և հանրակրթական հաստատությունների մանկավարժների բարեվարք վարքագիծը. 2) ամրապնդել հանրության վստահությունը հանրակրթական հաստատությունների նկատմամբ»:**
- **Խորհրդի անդամի և մանկավարժական կադրերի բարեվարքության կանոնների սահմանման հիմնական սկզբունքներ կարող են դիտարկվել՝ բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը, քաղաքական զսպվածությունը և չեզոքությունը և այլն:**
- **Որպես բարեվարքության եզրույթի սահմանում առաջարկվում է դիտարկել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» որոշմամբ սահմանված վարքագծի կանոններին վերաբերելի հիմնական հասկացությունները և դրանց մեկնաբանությունները:[2]**

3. «ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» բաժնի վերնագիրը խմբագրման կարիք ունի, քանի որ նշված բաժնում ներկայացված են ոչ թե հաստատության խորհրդի անդամների վարքականոնների ընդհանրական պահանջները, այլ անմիջապես վարքագծի կանոնները:

Առաջարկություն

- **Բաժնի 4-րդ կետի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ)»:**

3.1 Նույն բաժնի 4)-րդ ենթակետում հաստատության խորհրդի անդամների համար սահմանված «քաղաքական չեզոքության» կանոնը ամբողջությամբ չի ծածկում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 8-րդ մասով «8. Ուսումնական հաստատություններում իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» արգելքները և սահմանափակումները:

Առաջարկություն

- **Բաժնի 4)-րդ ենթակետում «քաղաքականապես չեզոք» բառերից հետո ավելացնել «զսպվածություն» եզրույթը:**

---

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164523

- **Միաժամանակ, որպես ինքնուրույն վարքագծի կանոն սահմանել խորհրդի անդամի կողմից ուսումնական հաստատություններում կրոնական գործունեության և քարոզչության իրականացումը:**

3.2 Նույն բաժնի 5)-րդ ենթակետում կոնկրետացման կարիք ունի խորհրդի անդամի պարտականությունների կատարման վրա «անձանական» հարաբերություններից զատ «այլ հարաբերությունների» շրջանակի սահմանումը:

Առաջարկություն

- **Բաժնի 5)-րդ ենթակետում «այլ հարաբերություններ» բառերի փոխարեն սահմանել «ֆինանսական, տնտեսական, առևտրային» բառերը, ինչպես նաև «պարտականությունների» բառից առաջ ավելացնել «խորհրդի անդամի» բառերը:**
- **Նույն բաժնում, որպես ինքնուրույն վարքականոն սահմանել խորհրդի նիստերի ժամանակ խորհրդի նիստերի օրակարգով սահմանված քննարկվող հարցի շրջանակներում կառավարման խորհրդի անդամի կողմից շահերի բախման իրավիճակների առկայության մասին հայտարարությունների կատարումը:**

3.3 Նույն բաժնի 6)-րդ ենթակետում Խորհրդի անդամը «չպետք է ստեղծի բարոյահոգեբանական ճնշող մթնոլորտ» կանոնը խիստ գնահատողական է և կարիք ունի հստակեցման: Մասնավորապես, խորհրդի անդամի կողմից, որ գործողությունները կամ արարքներն են համարվելու բարոյահոգեբանական «ճնշող», որոնք ոչ: Պարզ չէ թե ո՞վ պետք է դա գնահատի կամ մեկնաբանի:

Առաջարկություն

- **Բաժնի 6)-րդ ենթակետը խմբագրել այն հաշվով, որ այն համապատասխանի և բխի խորհրդի անդամին հանրակրթության մասին օրենքով վերապահված լիազորություններից:**

3.4 Նույն բաժնի 7) և 8)-րդ ենթակետերում՝ «7.սովորողների ծնողների կամ հոգաբարձուների կողմից ուսումնական հաստատությանը ցուցաբերած անշահախնդիր օժանդակության ընդունումն իրականացնի պատշաճ ընթացակարգով..» և «8.դպրոցի ղեկավարությունն իրավունք չունի ուսուցչից պահանջելու կամ սեփական նախաձեռնությամբ՝ առանց ուսուցչի գիտության, հավաքելու նրա անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ…» կարգավորումները չեն վերաբերում խորհրդի անդամի գործառույթներին և իրենցից վարքագծի կանոն չեն ներկայացնում:

Առաջարկություն

- **Բաժնի 7) և 8)-րդ ենթակետերը հանել:**

4. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ» բաժնի «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ, ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ» ենթավերնագիրը հաջորդող էջերում կրկնվում է:

Առաջարկություն

- **«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ, ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ» ենթավերնագիրը հանել:**

4.1 Նույն բաժնի 5) և 6) ենթակետերը՝ «5) Հասարակական դերակատարումը պատշաճ իրականացնելու նպատակով մանկավարժական աշխատողի համար կարևոր է վարքականոնների յուրացումը, և հատկապես կիրառումը իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս և դրանից դուրս» և «6) Մանկավարժական աշխատողի գործունեության արդյունքում անձը ինքնադրսևորվելիս ավելի հավասարակշռված և ինքնավստահ կդառնա, որովհետև կգիտակցի, որ ճիշտ է վարվում և դիմացինից համարժեք վերաբերմունքի ակնկալիք կունենա» դրույթները իրենցից վարքագծի կանոններ չեն ներկայացնում և չեն բնութագրում մանկավարժի վարքագիծը:

Առաջարկություն

- **Բաժնի 5)-րդ ենթակետի դրույթները տեղափոխել վարքականոնների 4-րդ՝ «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ» բաժին, իսկ 6)-րդ ենթակետը հանել:**

4.2 Նույն բաժնի 19)-րդ կետում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասին կատարված հղումը չի կարող վարքագծի կանոն հանդիսանալ: Բացի այդ, քաղաքական չեզոքության մասին դրույթը արդեն իսկ սահմանված է նույն բաժնի 18)-րդ կետում:

Առաջարկություն

- **Բաժնի 19)-րդ կետը շարադրել մանկավարժին ներկայացվող քաղաքական չեզոքության և կրոնական գործունեության ու քարոզչության արգելքի պահանջները պահպանելու իմաստով:**

4.3 Նույն բաժնի 21)-րդ կետում շարադրված «Ուսումնական հաստատության մասին հրապարակումներում պետք է լինի հստակ» կանոնը չի բնութագրում մանկավարժական աշխատողների վարքագիծը: Բացի այդ, նշված կանոնը չի վերաբերում աշակերտների հետ մանկավարժական աշխատողների փոխհարաբերություններին: Համանման կերպով, բաժնի 17),18),19) և 20)-րդ կետերում շարադրված վարքագծի կանոնները նույնպես չեն բնութագրում մանկավարժական աշխատվողների փոխհարաբերությունները աշակերտների հետ բաժնի գործընթացները:

Առաջարկություն

- **Բաժնի 17),18),19), 20) և 21)-րդ կետերում նշված վարքագծի կանոնները վերաշարադրել մանկավարժական աշխատողների հարաբերությունները աշակերտների հետ գործընթացի համատեքստում:**

4.4 Նույն բաժնում բացակայում են մանկավարժական աշխատող և աշակերտ հարաբերություններում հանրակրթական հաստատություններում հալածանքի (bulling), ոտնձգության (harassment) երևույթների, դրամահավաքի, կրկնուսույցում գործընթացներում մանկավարժական աշխատողների վարքագիծը կարգավորող կանոնները:

Առաջարկություն

- **Բաժնի 21)-րդ կետից հետո ավելացնել հանրակրթական հաստատություններում հալածանքի (bulling), ոտնձգության (harassment) երևույթների, դրամահավաքի, կրկնուսուցում գործընթացներում մանկավարժական աշխատողների վարքագիծը կարգավորող կանոնները:**

5. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ - ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բաժնում մանկավարժական աշխատողների վարքագծի կանոնների շարադրանքը չի համապատասխանում նախորդ բաժնում կատարված ձևակերպումների ձևաչափին:

Առաջարկություն

- **Բաժնի բոլոր ենթակետերից դուրս բերել «Մանկավարժական աշխատողը» բառակապակցությունը և այն դարձնել վարքագծի կանոնների ենթավերնագիր:**

5.1 Նույն բաժնի 12) -րդ ենթակետում «… պարտավոր են խուսափել անհիմն և աղմկահարույց իրավիճակներ ստեղծելուց» վարքագծի կանոնը խիստ գնահատողական է, «անհիմն իրավիճակ» եզրույթը, որպես երևույթ նկարագրելի չէ:

Առաջարկություն

- **Բաժնի 12)-րդ ենթակետերից հանել «անհիմն» բառը:**

5.2 Նույն բաժնի 14)-րդ ենթակետի վարքագծի կանոնը մանկավարժական աշխատողին պարտավորեցնում է, որպեսզի «սեփական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նպատակով պետք է համերաշխություն արտահայտեն գործընկերների, նրանց միությունների օրինական պահանջներին»: Մինչդեռ, նման վարքագծի կանոնը սահմանափակում է մանկավարժական աշխատողի ազատությունը սեփական համոզմունքով առաջնորդվելու սկզբունքին: Նշված վարքագծի կանոնը ավելի շուտ իրենից ներկայացնում է պարտադրանք՝ այլ ոչ թե վերաբերմունք:

Առաջարկություն

- **Բաժնի 14)-րդ ենթակետի կանոնը խմբագրել այն հաշվով, որ վերանա մանկավարժական աշխատողին ներկայացվող պարտադրանքի հանգամանքը:**

6. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ - ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բաժնում.

6.1 17) և 18)-րդ ենթակետերում ներկայացված վարքագծի կանոնները՝ «17.Ծնողների հետ մանկավարժական աշխատողի հարաբերությունները ոչ մի կերպ չպետք է ազդեն աշակերտների գնահատականի կամ կրթական այս կամ այն ծրագրերում նրանց ներառելու հանգամանքի վրա» և «18.Մանկավարժական աշխատող-աշակերտ փոխհարաբերությունների և աշակերտների գնահատականի վրա ոչ մի կերպ չպետք է ազդի աշակերտների ծնողների կողմից ուսումնական հաստատությանը ցուցաբերված աջակցությունը…. » բովանդակությամբ միմյանց կրկնում են:

Առաջարկություն

- **Բաժնի 17) և 18)-րդ ենթակետերը միավորել և ձևակերպել մանկավարժական աշխատողի վարքագծի կանոնի նոր շարադրանք:**

7. «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ» բաժնում.

7.1 21) և 22)-րդ ենթակետերում մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքագծի կանոնների կենսագործման ու վերահսկման մասով ոչ մի կարգավորում նշված չէ: Այն միայն թողնվել է մանկավարժական աշխատողների ու խորհրդի անդամների գիտակցությանն ու համարժեք վարքագծի դրսևորմանը, իսկ վերահսկողությունը նախատեսված է իրականացնել միայն ինքնագնահատման միջոցով: Նշված կարգավորումները բարեվարքության վարքականոնը գործնականում կիրարկման տեսանկյունից ոչինչ չեն տա և արդյունքում մշակված փաստաթուղթը կմնա որպես ձևական «թուղթ»: Մասնավորապես, բացակայում է հանրակրթական ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների համար սահմանված վարքականոնների կիրարկման պատասխանատուի ինստիտուտը: Նույնիսկ մանկավարժական աշխատողի կամ կառավարման խորհրդի անդամի «անհատի գիտակցման» բարձր մակարդակը պահանջում է սահմանված վարքագծի կանոնների կիրառման ժամանակ վերահսկողություն: Ուսումնական հաստատությունում վարքականոնների նկատմամբ վերահսկողությունը նախատեսվում է իրականացնել «անհատի ինքնագնահատման և հասարակական կարծիքի զուգակցման» վեհ գաղափարով: Մինչդեռ, գործնականում բացակայում է հասարակական կարծիքի ստացման ուղիների՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում քաղաքացիներից, ծնողներից այլ շահագրգիռ կառույցներից մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքների, այդ թվում անանուն, քննարկման և եզրակացությունների ու որոշումների կայացման գործընթացը ապահովող կարգավորումները:

Առաջարկություն

Բաժնի 21) և 22) -րդ ենթակետերը վերաշարադրել այն հաշվով, որպեսզի

- **Հանրակրթական հաստատությունում սահմանվի մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքականոնների պահանջների պահպանման պատասխանատուների՝ համապատասխանաբար տնօրեն կամ մանկավարժական խորհրդի անդամ և կառավարման խորհրդի նախագահ կամ այլ անդամի ինստիտուտ:**
- **Երկրորդ, մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների կողմից վարքականոների խախտումները պետք է առաջացնեն կարգապահական պատասխանատվության միջոցներ: Այդ կարգապահական պատասխանատվության միջոցները կարող են ներառել ինչպես դիտողություն, նկատողություն և այլ միջոցներ, այնպես էլ ունենան նյութական հետևանքներ, ինչպիսիք կարող են լինել ուսուցչի տարակարգի իջեցումը, վարձատրության կամ պարգևատրությունների չափի նվազեցումը և այլն:**
- **Երրորդ, անհրաժեշտ է սահմանել հանրակրթական հաստատության այն մարմինը, որը պետք է քննի վարքականոնների խախտումների դեպքերը; Դա կարող է լինել էթիկայի հանձնաժողովը , որի ձևավորման կարգը և կազմը պետք է հաստատվի օրենսդրորեն:**

- **Չորրորդ, օրենսդրորեն անհրաժեշտ է սահմանել այն պաշտոնատար անձին կամ մարմնին, որը կարող է վարքագծի կանոնների խախտման փաստերի և կայացված եզրակացությունների հիման վրա մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ:**
- **Հինգերորդ, անհրաժեշտ է արտացոլել մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքագծի կանոնների պահպանման ուղղությամբ վերապատրաստման դասընթացներ անցնելու մասով պարտականությունները, ինչպես նաև ստանալու խորհրդատվություն և պարզաբանումներ վարքագծի կանոնների պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ:**
- **Վեցերորդ, մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքականոնների կիրարկումն ապահովելու գործում կարևոր հանգամանք է մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների կողմից գործընկերների կատարած խախտումների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու պահանջը, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում քաղաքացիներից, ծնողներից, այլ շահագրգիռ կառույցներից մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամների վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ ստացված բողոքների, այդ թվում անանուն, քննարկման և եզրակացությունների ու որոշումների կայացման գործընթացի ապահովումը:**
- **Յոթերորդ, վարքականոնների պահանջների պահպանման և վերահսկման կարևոր գործիքներից է վարքագծի կանոններին մանկավարժական աշխատողների և կառավարման խորհրդի անդամներին դրանց մասին իրազեկումը և ստորագրությամբ վավերացումը՝ իրենց գործունեության ընթացքում այդ դրույթների անվերապահ պահպանման և կիրառման գործում պարտականության ստանձնումը:**

7.2 Նույն բաժնի 23)-րդ կետով նախատեսվում է «Ուսումնական հաստատություններում մանկխորհրդի որոշմամբ, ելնելով հաստատության առանձնահատկություններից, համայնքում գործող ավանդույթներից, կարող են սահմանվել վարքականոնի առանձին դրույթների հավելումներ և լրացումներ՝ ներքին կարգապահական կանոններում՝…»: Նշված կարգավորումը վերաբերելի չէ վարքագծի կանոնների կիրարկման գործընթացին: Բացի այդ, ուսումնական հաստատությունում կարգապահական կանոնները սահմանված են կոնկրետ ընթացակարգերով և դրանք չեն կարող նույնականացվել վարքագծի կանոնների հետ: Վարքագծի կանոնները բխում են կոնկրետ բարեվարքության (էթիկայի) սկզբունքներից և դրանք արտացոլում են էթիկայի նորմերի կամ սկզբունքների պահպանման նկատմամբ դրսևորվող վարքագիծը, մինչդեռ կարգապահական կանոնները բխում են կոնկրետ գործընթացի իրականացման օրենսդրական կարգավորումներից՝ պահանջներից, որոնք սահմանված են իրավական կոնկրետ ընթացակարգերով կամ առանձին կարգերով: Այն բոլոր վարքագծի կանոնները, որոնք արդեն իսկ վերածվել են կարգապահական կանոնների, դադարում են որպես վարքագիծ հանդես գալ:

Առաջարկություն

- **Բաժնի 23)-րդ ենթակետը հանել:**

Ընդհանուր առմամբ, «Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին» ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագծը կարիք ունի խմբագրական, առանձին կանոններում կիրառվող եզրույթների պարզաբանման և հստակերցումների իրականացման, շարադրանքի միասնական ոճի, ինչպես նաև կառավարման խորհդի անդամների և մանկավարժական աշխատողների իրենց գործառույթերով պայմանավորված վարքագծի նոր կանոնների սահմանման:

Նոր կանոնների շարքում անհրաժեշտ է ամրագրել նաև մանկարվարժական աշխատողների և կառավարման խորհուրդի անդամների վարքի համապատասխունությունը ժողովրդավարական, մասնակցային և բազմակարծիք մշակույթի հիմնարար դրույթներին: Մասնավորապես, մանկավարժական աշխատողը և խորհուրդի անդամը պետք է ընդունի և և ճանաչի ազատ ժողովրդավարական հասարակության հիմնական արժեքները, բարձրաձայնի իրավահավասար և բազմակարծիք միջավայրը խաթարող գործողություններն ու հետամուտ լինի դրանց քննարկմանը կոլեգիալ մարմիններում: Մանկավարժական աշխատողը և խորհուրդի անդամը պետք է անհանդուրժող լինի կոռուպցիոն, շահերի բախման և այլ հակահրավական վարքի նկատմամբ, նպաստի հանրակրթական ուսումնական հաստատության օղակներում մասնակցային մշակույթի խրախուսմանը և որոշումների մասնակցային ընդունմանը, ձգտի դիրքորոշում ձևավորել դպրոցի մանկավարժական համակարգի աշխատանքներին առնչվող հարցերում և այլն:

Ելնելով վերոնշյալից ԹԻՀԿ-ն առաջարկում է լրամշակել նախագիծը՝ հիմք ընդունելով միջազգային փորձը, համալրել վարքագծի նոր կանոններով ու դրանց կիրարկումն ապահովող մեխանիզմներով: Այդ նպատակով կազմակերպել փորձագիտական քննարկում նախագիծը հեղինակող մասնագետների և ոլորտային փորձագետների հետ:

Կատարող՝ Արմեն Խուդավերդյան